

ՆԱՅԻԼ ՔԵԶԻ

4+4+4

Սա կը սիրեմ մայի՛ր՝ քեզի՛ լուռ ու ժպտուն...
 Իմ աչքերուն կ'իջնէ մեղմով դող մ'անանուն,
 Զերթ մանկութիւնն իմ լուսաբաղձ, անըրջադէտ,
 Թարմ հասակիդ իբրեւ ցօղումն արիւնիս հետ...:

Իմ աչքերուն կ'իջնէ մեղմով դող մ'անանուն,
 Թիթեռն ինչպէս շուրջը փերթին ծաղիկներուն.
 Սենեակ անգարդ՝ շատըրուանուող սերովդ անուշ,
 Որ կ'անձրեւէ խորը հոգւոյս, ջերմ, փաղցրայուշ:

Թիթեռն ինչպէս շուրջը փերթին ծաղիկներուն,
 Իմ սերերուն մէջ դուն բարակ երի՛գ հոսուն,
 Պիտի անցնիս ու չը հատնիս, ծառերուն տակ,
 Շուփերուն մէջ ու արեւին՝ ծիծաղ յստակ...:

Իմ սերերուն մէջ՝ դուն բարակ երի՛գ հոսուն...:
 Բայց կը մնամ այնպէս երկչոտ, այնպէս հեռուն,
 Իմ մեղաւոր, իմ ըղձաւոր հոգւոյս քով մերթ-
 Ըսես իջնողն ըլլար ծաղիկ մը լուսաթերթ...:

ՇԷՆ-ՄԱՀ